

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ Է Ֆ օ Ն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ.
Տ է Լ Է Ֆ օ Ն № 253.



ԲԱՏՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿՍԵ 1899 ԹՎԱԿԱՆԻ

ՄՇԱԿ

(27-րդ ՏԱՐԻ)

ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

«ՄՇԱԿԸ» ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԱՄԲ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՄ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տարին և մէկ և տարին ամսվա-
նը՝ 9 ռ., ինն և ութ ամսվանը՝ 8 ռ., եօթ ամսվանը՝ 7 ռ., վեց ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը
5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու ամսվանը՝ 2 ռ. և մի ամսվանը՝ 1 ռուբլի:
ԱՐՏԱՍԱՀՄԱՆԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամբիկայի բաժանորդները պէտք է վճա-
րեն տարեկան 6 ռուբլի. Ն. Բ. օղակի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժա-
նորդները՝ 10 ռուբլի:

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՐԱԳՐԱՏԱՆԸ (Բաղարայան և Բարձրակայան փողոցների անկիւն):
Կարողութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և
ծրարներ ուղարկելու, պէտք է գիմել հետեւեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция „МШАКЪ“;
իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien „MSCHAK“.

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:

Ա. Պ. Ա. Ռ. Ի. Կ. Բ. Ա. Ժ. Ա. Ն. Ո. Ր. Գ. Ա. Գ. Ր. Ո. Թ. Ի. Ե. Ը. Ն. Գ. Ո. Ի. Ն. Վ. Ո. Ի. Մ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ապագային դոճ.— Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մա-
մուլ. Մատենադարան. Նամակ Սոփալից.
Նամակ Սոփալից. Ներքին լուրեր.— ԱՐ-
ՏԱԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Թիւրքիա. Մակեդոնիա.
Նամակ Պարսկաստանից. Արաբիայի լուրեր.—
ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.— ՀԵՌԱԳԻՆՆԵՐ.— ԲՈՐՄԱ.—
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նա-
մակ Թիւրքիայից:

ԱՊՐԱՊԻՒՆ ԶՈՋ

Մենք մի քանի անգամ առիթ ենք ունե-
ցել յայտնելու, որ ազգայնականութեան պի-
տոյքները շատ լիարժեք գնով են բաւա-
րարութիւն ստանում, որ, օրինակ, մեր ժո-
ղովրդը աւելի բարձր գնով է ձեռք բե-
րում իր համար հաղթանակներ, մեքենաներ,

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԹԻՐԻՔԻԱՅԻՆ

Կ. Պ. Օ. Լ. Կ. Բ. Ա. Ն. Ո. Ր. Գ. Ա. Գ. Ր. Ո. Թ. Ի. Ե. Ը. Ն. Գ. Ո. Ի. Ն. Վ. Ո. Ի. Մ.

Հեռագիրներն արդէն ծանուցին Յունաստա-
նի Գէորգ իշխանին յաղթանակաւ մուտքն ի
Կրետէ՝ զեկտեմբերի 9-ին: Գէորգ իշխանին պէս
և ոչ մէկը այսքան բարեկեցիկ համակրանքներով
անցած է իր պաշտօնին գլուխը: Նորին բարձ-
րութիւնը չունի իրեն նախորդը: Կղզւոյն իշ-
խանութիւնը ձեռք առնելէ առաջ՝ անիշխանու-
թիւն, յեղափոխութիւն, եղբայրասպան պայքար
մը և թշուառութիւն միայն կը տիրապետէին
կղզւոյն մէջ:

Նորին բարձրութեան մուտքն ի Կրետէ, կեղ-
տոտ իշխանութեան մը բարձունքն ու ցաւալից
և արիւնալի ժամանակամիջոցի մը փակումն է:
Յետ այսու, կրետական տարեցոյցներու մէջ, 1898
դեկտեմբեր 9/21 երջանիկ թուականը՝ տօնական
օրերու կարգը պիտի անցնի: Գէորգ իշխանը,
«Maréchal Bugeaud» մարտամուտն մէջ բազմած,
տարաւ իրեն հետ իր հայրենակիցներուն և նոր
հպատակներուն երջանիկ ապագայի մը ամենա-
պայծառ յոյսերն ու խոստումները՝ իր արիւն-
թեան ու երիտասարդութեան հրապոյրներով
հանդերձ: Կրետացիք ցնծութեան կեցցէներով կը
կայլեն ու պիտի կայլեն նորին բարձրութեան
անունը փառաբանելով: Կրետացիներուն համար
ազատութեան և անկախութեան արշալոյսն է՝
որ կը պարզուի. նոքա ձեռք կը բերեն երկար
ժամանակներէ հետէ ճնշման ենթարկուած ի-

քան արտասահմանի ժողովուրդը: Այդ ե-
րևոյթի պատճառը մի կողմից այն է, որ
մենք արհեստագործութեան, տեխնիկայի
մէջ աւելի յետ ենք մնացել ուրիշ երկրի-
ներէն, իսկ միւս կողմից այն է, որ մաք-
սեղը, լիարժեքացնելով արտասահմանից եկող
ապրանքները, լիարժեքացնում են և մեր
երկրի ապրանքները: Մի խումբ տնտեսա-
գէտներ և պետական գործողներ առում են,
որ այդ լիարժեքութիւնը անհրաժեշտ է և
նրան պէտք է համարել իրեն մաքսի մի-
ջոցով կարելի է դժուարացնել արտասահ-
մանեան ապրանքների մուտքը Ռուսաստան
և նպաստել տեղական արհեստանոցների և
գործարանների զարգացման: Ճիշդ է, Ռու-
սաստանի բազմամիլիոն ժողովուրդը աւելի

րենց աղբային արժանապատուութիւնը և այն
ամեն բարեքն՝ որոց համար բազմաթիւ տարի-
ներու ընթացքին մէջ անբան կռուեցան, մաք-
սեղիցան, տանջուեցան ու Կրետէն իրենց ա-
րիւնքով ողողեցին: Այս պատճառաւ է որ՝ ոչ
թէ միայն Կրետէի մէջ, այլ ուր որ կրետացի
կայ, հեղինակ միանշանակ, ուրախութեան լիա-
շուրթն ձայնելով կը տօնեն նահատակ կղզւոյն
ազատութիւնը և մէկըմէկ կը չորհարեն:

Աղբջանդիւրայի մէջ կրետական եղբայրակ-
ցութեան բոլոր անդամները հաւաքուելով Յու-
նաստանի Գէորգ թագաւորին, Գէորգ իշխա-
նին և աղբային ընդհանուր ժողովոյ նախագահ
պ. Սֆաքիանթիսին ուղղեցին շնորհաւորական
հեռագիրներ:

Գեկտեմբեր 9/21, չորեքշաբթի առաւօտ՝ խիստ
կանուխէն, կղզին մէջ որոտալիւր ձայնի օդը
կը թնդացնէին—«Կեցցէ Եօրկիս իշխան, կեցցէ
Կրետէ, և Միսոս երջանիկ կղզւոյն բոլոր բնա-
կիչները ուրախութեան արտասուք կը լիարժեք-
նեն: Նրեք կարելի չէ նկարագրել այն խանդավա-
ռութիւնը, որ կը տիրէ բոլոր հայրենասէրներու
սրտերուն մէջ: Կրետէի մէջ գտնուող բոլոր եւ-
րոպացիներն ալ եղբայրակցաբար կը տօնեն իշ-
խանին մուտքն ի Կրետէ: Արտասուք ուրախու-
թիւն մը և յարաձուռ գործունէութիւն մը կը
տիրեն քաղաքին մէջ (Կանդիա): Խուռն բազ-
մութիւն մը կը վիտայ ամեն փողոց:

Բոլոր քաղաքը զարդարուած է անդուգական
զարդաբանքներով: Կրետացիք քաղաք մտնելով՝
աղբային երգերով փողոցներուն մէջ ժան կու-
ղան և, ի պատիւ Եօրկիս իշխանին, մուրհիւն
«վիվա»-ներ կարձակեն:

Առաւօտեան ժամը 9-ին Սուլթանի նահանգ-

թանգ գնով է ձեռք բերում իր անհրա-
ժեշտ պիտոյքները, նա մի քանի տասնեակ
միլիոններ աւելորդ փող է ծախսում իր
գնած ապրանքների վրա, բայց նա գրանով
նպաստում է Ռուսաստանի գործարանների
բարգաւաճման:

Սակայն նորագոյն վիճակագրական տե-
ղեկութիւնները ցոյց են տալիս, որ չը նա-
յելով մեծ և ծանր մաքսերին, զարձեւալ
արտասահմանեան շատ ապրանքներ աւելի
էժան կերպով են հասնում մեր երկրի ժո-
ղովրդի ձեռքը, քան բուն Ռուսաստանում
արդիւնաբերվածը: Թւերը ցոյց են տա-
լիս, որ, օրինակ, պղինձի երեք քառորդը, իսկ
թուջի մի երրորդ մասը բերվում է ար-
տասահմանից չը նայելով այն բանին, որ
մաքսը հաւասար է ապրանքի գնի մօտ
40/0-ին: Այն ժամանակ, երբ պղինձը ար-
ժէ Ռուսաստանում պուլը 13 ռուբլի, նա
Լոնդոնում ծախվում է 8 ռ 27 կոպեկով,
ուստի մաքսը, որ հաւասար է 3 ռ. 75
կոպեկի, ամենեւին չէ արգելում, որ Լոն-
դոնի վաճառանոցի պղինձը մտնի Ռուսաս-
տան: Նոյն վիճակագրութիւնը ցոյց է տա-
լիս, որ վերջին տարիները պակասում է
հում նիւթերի մուտքը արտասահմանից,
իսկ զրա փոխարէն աւելացել է շինված
աւարիների, մշակված նիւթերի մուտքը,
ուստի և այն շահը, որ պէտք է ստանար
բանւոր դասակարգը, մնում է արտասահ-
մանում: Ս. Գ. Կիւրիով արդիւնագործութեան
օգուտը մնում է օտար երկրին, իսկ մեր
ազգայնականութիւնը շարունակում է լիարժեք
գնով ձեռք բերել իրան հարկաւոր առա-
կանքներ:

Դուրս է գալիս, որ զոհը ապարդիւն է:
Տեղական գործարանատէրը, յոյս կապելով
մաքսերի օգնութեան վրա, չէ մտնում բո-
լոր այն կատարելագործութիւնները, որ
անհրաժեշտ են, չէ մտնում տնտեսութիւն
իր գործի մէջ և շատ մեծ տոկոս շահ է
հաշուում իր օգտին, չը մտածելով ապրան-
քի էժանութեան մասին: Անցնում են տա-
րիներ և փոխանակ տեղական արդիւնագոր-
ծութեան հաստատ զարգացման, մենք տես-
նում ենք արհեստական մի գրութիւն, որ
պահպանվում է արուեստական միջոցնե-

ղիւտը մտան ծովակալներու չորս նաւերը և
Եօրկիս իշխանը ֆրանսական «Bugeaud» ծովա-
կալ-նաւուն մէջն էր:

Ժամը 9-ը քսան վայրկեան անցած, նորին
բարձրութիւնը՝ ընկերութեամբ ֆրանսական ծո-
վակալ Պատիէի և միւս ծովակալներու՝ ցամաք
կալ, և բոլոր նաւերէն ողջունեցաւ թնդանո-
թի ձայնելով և ժողովրդեան կեցցէներով: Իշ-
խանն անմիջապէս կառք հեծաւ՝ իր աջ կողմն
առնելով ֆրանսական ծովակալը: Նորին բար-
ձրութիւնը բիշ մը դեղնած էր և բաւական յու-
զեաւ: Բոլոր ժողովրդեան կը բարեկէր ժպտուն
դէմքով:

Երբ Կանիա մտան՝ անբացատրելի էր ժողո-
վրդական խանդավառութիւնը՝ հանդէպ այդ իշ-
խանական յաղթանակի մուտքին: Այլեւի՜ր և Կա-
նիայի պահակազօրքերն ի զուգու ունենալով ի-
տալական նուազախումբը՝ Կանիայի քաղաքա-
դան առջև պատիւներ ընծայեցին իշխանին՝
մինչև կառավարութեան պալատը:

Կառավարութեան պալատին առջև միջազգա-
կին քաղաքապետ՝ զօրքերը, ի զուգու ունենալով
ֆրանսական նուազախումբը, բարեկ կեցան ան-
գլիական սպայի մը հրամանատարութեան
ներքև:

Բայց կառավարութեան պալատը ժամանելէ
առաջ՝ կառքերը կանգ առին մայր-եկեղեցին
առաջնորդող փաթեթի փողոցի մը բերանը:

Յեկեղեցւոյ զանգակներն իրենց ձայները
խառնելով ժողովրդական կեցցէներուն՝ ամբողջ
քաղաքը կը դրդեցնէին: Երբ եկեղեցի մտան՝
սկսաւ դռնաբանական աղօթքը: Յեկեղեցին լիքն
էր անթիւ բազմութեամբ:

Նորին բարձրութիւնը՝ կանգուն՝ իրեն համար ի

րով: Փոխանակ որ գործարանատէրը կարելի
համարի մաքսերի պակասեցնելը, նա նո-
րից դիմումներ է անում կառավարութեան՝
նոր արտօնութիւններ խնդրելով:

Բայց մինչև երբ: Ազգայնականութեան
ծախսած աւելորդ տասնեակ և հարկւր
միլիոնները հրապարակի վրա են դնում
այն բնական հարցը, թէ չէ՞ կարելի ար-
գեօք թեթեւացնել գործարանատէրերին
տրվող ծանր հարկը, թէ վտանգաւոր չէ՞
թուլացնել ժողովրդի այն ընդունակու-
թիւնը, որ յայտնի է գնելու և սպառելու
ոյժ անունով: Բնական է այդ հարցը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Ստացանք «Անահիտ» ամսագիրը, որ հրատա-
րակվում է Պարիզում, պ. Արշակ Զօպանեանի
խմբագրութեամբ: Մեր ձեռքը հասածը ամսագրի
երկրորդ համարն է: Որքան կարող ենք դատել
այդ համարից, «Անահիտ» գլխաւորապէս գրա-
կան-գեղարուեստական մի հանդէս պիտի լինի:
Նրա արտաքինը գեղեցիկ տպագրութիւն է գոր-
ծում. տպագրութիւնը մաքուր, պատկերները
չքեղ:

Ուշագրութիւն է գրաւում պ. Զօպանեանի
մի մեծ յօդուածը, «Պաշտօնը Արտիստի» վեր-
նագրով: Դա մի գեղեցիկ, տաք ոճով գրված յօ-
դուած է, որ կարգապէս է մեծ հետաքրքրու-
թեամբ: Թէ կենսագրութեան և թէ գրական գոր-
ծունէութեան նկարագրի մէջ պ. Զօպանեան
նոր, ինքնուրոյն մտքի է յայտնում: Յօդուա-
ծագիրը այն իրաւացի միտքն է յայտնում, որ
«Արտ» Հայաստանին՝ վէպի մէջ Արտիստի դուրս
է գալիս ոչ իբրեւ բարձրագոյն կրթութիւն ստա-
ցած մարդ, այլ իբրեւ ժողովրդի դաւակ: Դա մի
ինքնատիպ, բուն արեւելեան տաղանդ է: Արտ-
իստն և Նարեկացին, պ. Զօպանեանի կարծի-
քով, հայ գրչայութեան, հայ քնարերգութեան,
հայ բաղադրութեան հօր ներկայացուցիչներն են:

Վէպը ծայրէ ծայր ամբողջ կը հոսի. անոր
մեծ աշխուժումներն ունի, անոր միջին վայ-
րագրութիւններն ու անոր վիթխարի խեղճու-
թիւնը, անոր միաբնութիւնը, թանձրութիւնն ու
զեւուածը, անոր վսեմութիւնն ու անոր գրեցիկու-
թիւնն ալ, անոր մրրկներն ու անոր շեղչա-

մանաւորի պատրաստուած աթոռի մը քով և,
իր շուրջն ունենալով իր թիկնապահներն ու
ծովակալները՝ ներկայ գտնուեցաւ պատարազի
խորհուրդին: Կանիայի եպիսկոպոսը քարոզ խօ-
սեցաւ՝ որ մեծ տպաւորութիւն ըրաւ իշխանին
և բոլոր ներկայից վրա: Նորին սրբազնութիւնը
վերջացուց իր քարոզը մաղթանքներ ընելով նո-
րին բարձրութեան և արքայական գերզատանին
համար:

Յաւաքտ եկեղեցական արարողութեանց, իշ-
խանը ծաղիկներով ծածկուած՝ զօր ժողովուրդը
տուններու պատուհաններէն կը սփռէ իր վը-
րա, կառավարական պալատը գնաց՝ ուր, մեծ
ձայնով գարդարուած սրահին մէջ, ֆրանսա-
կան ծովակալ Պատիէ, ի ներկայութեան բոլոր
հիւպատոսական մարմինոյն, սպայից և իւրաքանչիւր
քրիստոնէայ հասարակութեանց պետերուն, իշ-
խանին յանձնեց պաշտօնապէս կղզւոյն կառա-
վարութիւնը:

Ծովակալ Պատիէ ատենախօսութիւն մ'ըրաւ՝
որ խանդավառեց բոլոր ներկաները, և վերջա-
ցուց իր խօսքերը բնովով՝ որ Սեբաստիոն համոզ-
ված է՝ թէ նորին բարձրութիւնը պիտի ապահովէ
երկրին խաղաղութիւնը և Կրետէի մէջ յառաջ
պիտի բերէ լուսաւորութիւն և երջանկութիւն:
Իշխանը իր կողմանէ շնորհակալութիւն յայտ-
նեց բոլոր ծովակալներուն և խնդրեց՝ որ ի
մասնաւորի յայտնեն իրենց պետութիւններուն
թէ ինչ եռանդուն ոգւով և անկողնակալու-
թեամբ պիտի աշխատի կղզւոյն բարեբաւոյն-
ութեան ու յառաջդիմութեանը:

Յետ այսորիկ կրետական դրօշը պարզուեցաւ
և խնդալին կեցցէներ օդը թնդացուցին:

Գիրուկ

կուտակած դանդաղութիւնն ալ: Ամբոխին երգին է ան, և գիւղի ամբոխին, ու Արեւելքի գիւղին: Իր յօդուածի վերջում ալ. Զօպանեան մի միտք է յայտնում, որ չէ կարելի չընդունել համակրութեամբ: Արեւմտեան հայերին Արեւելեան համակրեալ թէ յայտնի չէ. պատճառներէն զիստուրբ, ի հարկէ, «Ալէքը Հայաստանի»-ի լեզուն է, իր դաւառական ոճերով, օտար բառերով: Յօդուածագիրը առաջարկում է «Վարդանանք» վեպը արեւմտեան կանոնաւոր աշխարհաբարով, որպէս զի հայոց անդրախիւ վեպը տարածվի բոլոր հայերի մէջ: Ինքը, ալ. Զօպանեան, խոստանում է տալ «Անահիտ» մէջ Զանգի դետի նկարագրութեան թարգմանութիւնը: Դա մի շատ հետաքրքրական փորձ կը լինի: Մեր մէջ էլ այժմ Արեւելեան շատ չէ կարգացում իր լեզուի պատճառով: Եթէ ամբողջ ժողովրդական երգին գործը գրական լեզուի վերածել, այն ժամանակ մենք էլ կարող կը լինենք այդ փորձն անել: Յօդուածին կցած է Արեւելեանի պատկերը: Ամապրի միւս յօդուածներէն կը նշանակենք Ֆրոյտի «Հեղուկութեան» վեպին թարգմանութիւնը: Գոհոր Քօթիւնեանի «Հայուն ջիւղերը», Ֆրանսերէնի թարգմանած երկու փորձիկ «Երեւելեաններ» և «Քաղաքական կացութիւնը», որ կարգացում է հետաքրքրութեամբ: Կատարեալ անդրութիւն ենք մտղմում նոր ամապրի: Ներկայումս Եւրոպայում հաւաքված են թիւրքահայ համակրելի դրօշներ, որոնք բաւական յայտնի են իրանց նորոգում և ուղղութեամբ: Նրանք կարող են թէ իրանց սեփական աշխատութիւններով և թէ եւրօպական մտքի ու հայերի մէջ միջնորդ հանդիսանալով շօշափելի ծառայութիւն մատուցանել իրանց աղբիւն: Մենք իրաւունք ենք համարում աւելի մեծ պահանջներ անել այդ գրադէտներէն, ի նկատի առնելով մանաւանդ այն հանգամանքը, որ Եւրոպայում հրատարակվող երկու հայերէն ամապրերը վաճառքահաշիւներով ուղղութեան են հետևում և հետաքրքրութիւն չարժանում են համեմատաբար շատ նեղ շրջաններին մէջ: Մի հարուստ գրական-գեղարուեստական ամապր շատ կը նպաստէր մեր մայրենի գրականութեան: Ցանկանում ենք, որ «Անահիտը» լինէր այդ ամապրերը: *

Կ. Պօլսի «Մասին» հանդէսը մի քանի հետաքրքրական տեղեկութիւններ է տալիս թիւրքահայ մայրաքաղաքի հայ դպրականութեան դպրոցական գործերի մասին: Բանից դուրս է գալիս, որ Կ. Պօլսի հայերը ունեն 38 թաղային դպրոցներ 4483 երկու սեռի աշակերտներով և 219 ուսուցիչներով և վարժուհիներով: Այդ դպրոցները ամսական 63,953 դրուշ բիւշէ ունեն: Սակայն թող թուանշանները չը չլացնեն մեր: Այդ դպրոցներից գուցէ մի 3—4 հատ են դպրոցի նման: Թաղեր կան, որ դպրոցները ունեն ամսական 150 կամ 250 դրուշ բիւշէ: Վրուշը 8 կօպէկ է. նշանակում է որ այդ դպրոցները կառավարվում են ամսական 12—20 ռուբլի եկամուտով: «Մասինը» ասում է. «Մեղդինքնին չի խաբենք թէ տաճկահայերը գոն մայրաքաղաքի մէջ կառավարված կանոնաւոր նախնական կրթութիւնը արդէ ունին, քան ի նախնական կրթութիւնը արդէ ունին: Եւ այն համազօրմէն եմ թէ ձեռնարկող նախնական կրթութիւնը արդէ ունին, ոչ թէ միայն գաւառներում, այլ նաև Պօլսի մէջ ալ: Ուրիշ խօսքերով, մեր հասարակութիւնը իր նոր սերունդին հանդէպ իր ծանր պարտաւորութիւններուն դեռ չէ դիտակցած, Ուսումնական խորհուրդը սա իր ներկայ դրեովը բան մը չը կրնար ընել, քանի որ հրաշքներուն դարը անցուցած ենք:»

Շատ ճիշդ է...

Մ Ո Ս Ե Ն Ա Գ Ի Ռ Ո Ի Թ Ի Ի Ն

Թաւաղ-Երեւելեան երկու սերունդի դաւաճանութիւնը և Ալէք-Վաչագ Թաւաղ-Երեւելեան, հեղ. Զ. ձեռնարկէ, Նոր-Սեւանի 50 երես, գինը 10 կ.

XVIII-րդ դարում, վրաց թագաւորների թուական և անշնորհութեան պատճառով, Վրաստանում իշխան-ազնականները սատակ դորացան: Նրանցից շատերը, անհարգացած և բարոյապէս քրտնած վիճակի մէջ լինելով, աշխատում էին միւսների գլուխն անցնել և այդ ստոր նրապատակին հասնելու համար դիմում էին դաւաճանութեանը: Այդ տեսակ ազնականները շատ ուրախանում, երբ Վրաստանը արտաքին թշնամիների ձեռքին խաղալը դարձաւ և փաշաներ նշանակվեցին՝ երկրի այս և այն կողմը կառավարելու համար: Իշխան-պարսիները, միայն փաշաների հետ, կուտում էին վրացիների դէմ, անպակն վնասներ հասցնում մանաւանդ Պուրիա-Նախընթիւնին:

Այդպիսի դաւաճան սերունդն պատկանում էին և իշխան Թաւաղ-Երեւելեանը: Դրանց յանդէպ

նույնիսկ հասաւ այն աստիճանին, որ ցանկացան մինչև անգամ իրանց աղբական Պուրիայի թագաւորի ձեռքից դանդ խլել և դաւաճալ Քօթուէթի թագաւոր: Դաւաճաններից մէկը, Մամուկա թագաւորի թէք, սկսեց ամբողջ Քօթուէթի թագաւորի դուրսից, աշխատեց օսմանցիներին իր կողմը դարձնել: Այդ նպատակով գնաց Ախալցխայի փաշայի մօտ, ընդունեց մահմեդականութիւն և փաշայի մօտ պատանդ թողնելով իր որդի Մարտիկին, սկսեց ամբողջ Քօթուէթի աճարացի աւազակներով լցնել, որոնք յափշտակում էին մարդկանց և տանում թիւրքիա ու ծախում թիւրքերի վրա: Իսկ ինքը, Մամուկա, օսմանցի զորքերի գլուխն անցած, յաղթեց գուրիացիներին և դարձաւ Քօթուէթի տէր: Նրա որդի Մարտիկին գնաց հօր շուղով, նույնպէս մահմեդական դարձաւ, անուանվեց Մուլէյման և սկսեց չարաբել վրացիներին, որոնց անխնայ յափշտակում էր և թիւրքիայում ծախում: Դրանով նա մեծ անուն ստացաւ թիւրքիայում: Մարտիկին Ախալցխայի փաշայի ձեռքին խաղալը դարձած, նրա խորհրդով գնում է Կ. Պօլսի, ներկայանում է սուլթանին, ստանում է բէգութիւն և աւելի հպարտացած դաւաճալով Վրաստան՝ սկսում է աւելի անդուլտ և վայրենի կերպով վերաբերվել վրացիներին. կողոպտում և պղծում է եկեղեցիներ, յափշտակում է աղբիւններին, որոնցից շատերին թիւրքացնում է, շատերին էլ ուղարկում է իբրև նուէր սուլթանին: Նույն ուղղութեան տէր մարդիկ էին և նրա որդին՝ Մամադ բէգը և թուրք Ալի փաշան:

Վերջինս գերազանցեց իր պապին, մինչև անգամ փաշայութիւն ևս ստացաւ: Նա բաղմամբ վրացի ընտանիքներ գողովեցրեց թիւրքիա և Սամսոն քաղաքում ստացաւ կալուածներ և կենսաթոշակ: Նա բնաւորութեամբ աւելի ստոր էր, քան թէ իսկական մահմեդականները, որովհետև չը թողեց իր խայտառակ սովորութիւնը, առականներ խմեր էր պահում և կողոպտել ու կողոպտել էր ստալիս նույն իսկ մահմեդականացած վրացիներին:

Գրեցիք վրաց պատմութեան աղբաւոր գրականութեան համար մի գնահատելի գործ է. պ. Զ. ձեռնարկէ շատ պարզ և դիւրըմբռնելի լեզուով նկարագրել է դաւաճան Թաւաղ-Երեւելեանի ամբողջ սերունդը:

Գ. Տէր-Բաւթեան

ՆԱՄԱԿ ՍՂԱՍԻԹ

Յունվարի 8-ին

Յունվարի 5-ին և 6-ին մի քանի երկուսաւորներ՝ Քիֆիսի նահանգի ժողովրդական դպրոցների տեսուչ պ. Պալլովի և դաւաճապետի թիւրքականութեամբ՝ «աւետիս» ման եկան յօգուտ այս տարի բացված Լիւմիոզեան տարրական դպրոցի չքաւոր երկու սեռի սաների Փողովկեց 71 ր. 85 կ.: Դուրս գալով ծախս 8 ր. 45 կ., մնում է առձեռն 63 ր. 40 կ.: Այդ փողով պէտք է գնվեն արքայապետական և աշակերտութեան համար հանդերձեղէն և դասական պիտոյքներ, իսկ մի քանիսի համար պէտք է վճարվի ուսման վարձ: Հանդանակած փողը յանձնված է դպրոցի կառավարչին՝ այդ նպատակով գործադրելու, որի մասին կը տրվի հասարակութեան հրապարակական հաշիւ: Ծնորհակալութեան արժանի են թէ «աւետիս» ման եկող երկուսաւորները և թէ գործակալ Արշակ քահանայ Տէր-Ստեփանեան, որը թաթարական գիշերը գեղեցիկ խօսքերով յորդորեց հասարակութիւնը՝ համակրութեամբ վերաբերվել գործին: Բայց պիտուի, որ հասարակութիւնը վերաբերվեց մանուկներին օգնելու բարի գործին անտարբերութեամբ և սառնասրտութեամբ: Երկու գիշերը հանգանակված 71 ր. 85 կ... չնչին գումարը հաւաքվեց 50 տան մէջ: Շատերը էջին ընդունում «աւետիս» մանեկներին, շատերը ձեռնցում էին իրանց տանից բացակայ, հիւանդ կամ քնած. ծիծաղելի էր մանաւանդ, որ դիւմամբ հանգնում էին լամպաները. կային և այնպիսիները, որոնք երկար ժամանակ սպասել էին տալիս դռների բացվելուն: Շատ ցուպի է, որ մեր հասարակութիւնը «ես ինձ համար» անօգուտ սկզբունքը դարձրել է «սրբութիւն» սրբոց:

Յունվարի 5-ին, ճրագալոյցի գիշերը, գործակալ Արշակ քահանայ Տէր-Ստեփանեան ս. Կառապետ մայր եկեղեցում բարոյ խօսեց՝ հրաւիրելով հասարակութիւնը միջոցներ ձեռք առնել եկեղեցու դանձաւակ վերացնելու համար: Նա առաջարկեց՝ որ ամեն մէկը ներկայացնէ իր կարծիքը ծխականների ժողովին, որ չուտով կը գումարվի: Մեզ վրա ամաւանդ տպաւորութիւն թողեց բարոյի այն մասը, որով գործակալը ապացուցեց, թէ գանձանակ

դէմ է «Հայաստանեայ առաքելական եկեղեցու ոգուն», մի բան, որի հետ չեն ուղում հաշուել մեր խաւարամիտները: Մնում է, որ հասարակութիւնը լրջօրէն վերաբերվի հարցին ու ամեն ջանք գործ դնէ գանձանակ վերացնելու:

Այս տարի բացված Լիւմիոզեան տարրական ուսումնարանում ուսումնաւորվում է առանց թւանշանների: Ինչպէս յայտնի է, վերջին տարիները ուսուցիչ մանկավարժական աշխարհում դրադմուքի առարկայ դարձաւ թւանշանների հարցը և մեծամասնութիւնն այն կարծիքը յայտնեց, որ թւանշանները, բացի վնասից, ոչ մի օգուտ չեն արտադրում:

Մեծ ձիւնը դեռ ևս չէ հալվել, չը նայելով արեւային օրերին: Փողոցները ծածկված են սառույցի հաստ շերտով. մանուկը դժուար է:

Զ. Գրիգորեան

ՆԱՄԱԿ ԽՄԱԳՐՈՒԹԵԱՆ

Գրողին, յունվարի 7-ին

Ամսի 5-ին, ճրագալոյցին, «աւետիս» մանավարժ տեղիս փողը հայ գաղթականութեան մէջ, մեզ աղողեց հաւաքել ընդամենը վաթսուս և վեց ռուբլի, որը այսօր փոխադրվում է ձեռնպատակ: Խնարհաբար խնդրում ենք այս փողը հասցնէք Քրիստոսի դիւղի կարօտեալներին:

Յ. Յովհաննիսեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆ

Մենք արդէն յայտնեցինք, որ Քիֆիսի հայ կանանց մի շրջանում միտք է ծագել տօնել տիկին Զօլեանի բեմական գործունէութեան 35-ամեակը, որ լրանում է ամսիս 14-ին: Այդ նպատակով կազմվել է մի յանձնաժողով, որի մեզ ուղարկած յայտարարութիւնից երևում է, որ ամսիս 14-ին, հինգշաբթի, վրաց աշխատանքութեան թատրոնում, ի պատիւ տիկին Զօլեանի բեմական գործունէութեան, տրվելու է մի ներկայացում: Խաղալու են Սուրբուհիեանցի «Ելի մէկ զոհ» կօմիդիայի 2-րդ արարուածը, «Թաթարալա» կօմիդիայի 2-րդ արարուածը, Գարին-Վինյիզի «Հարկաւոր չէ» գրամատիկական Լուրիշ 1 արարուածով, «Վուշ քի իմ վեշեր» ֆարս-փողովի 1 գործողութեամբ: Անկասկած, հայ հասարակութիւնը չի դրանա իր ներկայութեամբ գնահատել տիկին Սալմիկ Զօլեանի, իբրև հայ անդրախիւ գերաստուհու, բեմական գործունէութիւնը:

Մի անձն, որ ցանկանում է իր անունը անշատ պահել, Բագուից ուղարկել է մեր խմբագրութեան 100 ռուբլի այն նպատակով, որ 75 ռուբլի բաժանեց արքայապետին, իսկ 25 ռուբլի յատկացնեց ձրի ճաշարանի մանուկներին: Աղքատների համար էջանակված գումարի մեծ մասը արդէն բաժանված է, իսկ 25 ռուբլին ուղարկեցինք ձրի ճաշարանի վարչութեան:

Իրգայի հայ ուսանողութիւնը դիմելով մեր խմբագրութեան, խնդրում է ուսանողների օգուտն ժողոված գումարից, որ գտնվում է մեր խմբագրութեան մէջ, ուղարկել 180 ռուբլի: Այդ քանակը Բագու միայն 125 ռուբլի: Կրկնում ենք, որ խմբագրութիւնը անպարմար է համարում փող ուղարկել մանաւոր հասցնելու, ուստի խնդրում է նշանակել այսուհետ դպրոցի վարչութեան կամ ուսանողներին նպատակ չհիմարկութեան հասցնել: Խմբագրութեան մէջ կար 504 ռուբլի 58 կօպէկ (տես «Մշակ» 1898 № 281), որից հանելով 125 ռուբլի և ճանապարհածախսը Կիւիվ, Իւրիւմ և Բագու փող ուղարկելու համար 3 ռուբլի 44 կօպէկ, մնաց խմբագրութեան մէջ 376 ռուբլի 14 կօպէկ:

Աղքատներին բաժանելու համար ստացել ենք Գ. Միլոզայեանից 10 ր. և պ. Գեորգեանից 5 ռուբլի: Այդ գումարը արդէն բաժանված է աղքատներին:

Հանգուցեալ Յովհաննիս Խուդաղեանի կտակի գործադրութիւնը, ինչպէս երևում է, դեռ շատ պէտք է ձգձգվի: Յայտնի է, որ անցեալ տարվա սկզբում հայոց Բարեգործական ընկերութեան խորհուրդը որոշել էր հիմնել հանրակացարան աղքատ աշակերտների համար. սակայն ընկերութեան ընդհանուր ժողովը, չը համաձայնվելով խորհրդի մտքի հետ, կազմեց մի յանձնաժողով, ընկնելու և մշակելու այն հարցը, թէ բարեգործական հիմնարկութեան ծրարելու աւելի նպատակաւարժ և օգտակար կը լինի Խուդաղեանի կտակի գաղափարին: Այդ յանձնաժողովը, գրեթէ ամբողջ մի տարի անցնելուց յետոյ,

տոյ, ներկայացնում է խորհրդին իր ծրագիրը, որ պէտք է ներթափվէր առաջիկայ ընդհանուր ժողովի ընտրութեան: Սակայն այժմ յայտնվում է, որ յանձնաժողովը, մի անհերքելի զանազանութեամբ, կամ գուցէ ինտրիգների պատճառով, մոռացել է իր նիւտերին հրաւրել երկու անձանց, որոնց նույնպէս ընդհանուր ժողովը բնութեւն էր յանձնաժողովի անդամ: Այդ մոռացված անդամներից մէկը, պ. Բ. Վարդանեան, բողոք ներկայացնելով խորհրդին, առաջարկել է չեղած նկատել յանձնաժողովի աշխատութիւնը. խորհուրդն ևս վերադարձրել է յանձնաժողովին նրա ծրագիրը, առաջարկելով նորից ընկել հարցը երկու անդամների մասնակցութեամբ: Երեւի, յանձնաժողովը մի ամբողջ տարի էլ դրա վրա գործ կը դնէ: Զենք կարող ներկայ գէպրում չը նկատել, որ խորհուրդը ևս իր գործունէութեանը աւելի ձեւական քնաւորութիւն է տալիս. բարեգործութեան մէջ ամենից շատ խոյս պէտք է տալ ձեւականութիւնից:

Խաղովի նահանգի Սուլի քաղաքից ստացանք Փիլիպպոս Սահակեանից, Մկրտիչ Սարգսեանից, Սողոմոն Ոսկանեանից և Ուստին Ոսկանեանից 20 ռուբլի յօդու թաղիկի Հայունեայ Բարեգործական ընկերութեան համար: Ստացանք նաև 10 ռուբլի նույն ընկերութեան համար Բաղդից, Մ. Մուշկաթարեանից: Ուրեմն ընդամենը ունենք 30 ռուբլի:

Կառավարչական շրջաններում երկարութիւն կայ, ինչպէս հարցրուած են մայրաքաղաքի լրագրողները, խորհրդակցութիւն կազմել քաղաքային ինքնավարութեան ներկայացուցիչների՝ քաղաքային ձեռնարկութիւնների կօնցեստիաների հարցը ընկնելու համար: Այդ հարցը, իր ներկայումս թէ կառավարութեան և թէ հասարակութեան մտածողութեան առարկայ է դարձել, կանան նշանակութիւն ունի քաղաքային ինքնավարութեան համար: Երկարութիւն կայ ընտրութեան երկարելու հետ ընտրարան վարձողների քաղաքային ինքնավարութեան մէջ մասնակցելու հարցը:

Ինչպէս յայտնի է, Ֆինլանդիան, վայելելով ներքին ինքնավարութիւն, ունի իր սեփական դրամը: Այժմ, ինչպէս հարցրուած են ֆինլանդական լրագրողները, կառավարչական շրջաններում ծրագրել է կազմել միջոցներ Ֆինլանդիայում ուսուցիչ դրամ:

Այսօր, յունվարի 12-ին, Մօսկվայի համալսարանի տօնախմբութեան օրը, Քիֆիսում, այդ համալսարանի նախկին ուսանողների շրջանում, կայանաւում է ճաչկերթի, որին մասնակցող յանկացողները պէտք է վճարեն 4 ր. 25 կ.: Գաչկերթի տեղի է ունենալու Կրոյսովում, ժամը 3-ին:

Մի պարոն, Բագուից անուշով, նկարել է այն տան նախնական ձեռք, ուր ապրել է Պուշկին Քիֆիսում եղած ժամանակ: Այդ տունը այժմ քանդված է և նրա տեղ նոր տուն է շինված: Վերականգնելով Պուշկինի ապրած տան նախնական ձեռք, պարոնը մտադիր է այդ նրկարն ուղարկել Պետերբուրգ՝ պահելու համար:

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Վերջին օրերս Չախմախեան եղբայրները հային յանձնեցին իրանց ծերունի հօրը: Հանգուցեալ յայտնի հարուստներից էր, բայց թողել է մի համակրելի կտակ, որ իր անունով մի ձեռնարանաւարտ, կամ որ և է թեմական դպրոցի տարրական ուսանող ուղարկելու բարձրագոյն ուսում ստանալու այն պայմանով, որ վերջինս կուտակոյն լինի:»

ԱՆՍԱԿԱՎԱՔԻՑ մեզ գրում են. «Բարեգործական ընկերութեան Ախալքալաքի վարչութեան նախաձեռնութեամբ մի քանի հօգի Մինդեան երեկոյեան «աւետիս» ման եկան և տեղական աղքատների օգուտն ժողովեցին 214 ր. 50 կօպ: Ծնորհակալութեան արժանի են թէ նորակազմ վարչութիւնը և թէ նախաւորները, որոնք միշտ առաւատաձեռն են եղել այսպիսի դէպքերում:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

Թ Ի Ի Բ Ի Ա

«Frank. Zeitung» լրագրի ստացած տեղեկութիւնների համեմատ, թիւրքերը հալածում են հայերին ոչ միայն իրանց երկրի սահմաններում, բայց և իրանց երկրից դուրս: Որովհետև հայերը չեն կամենում, անպաշտպան ոչխարների նման, կտորվել քրդերի ձեռքով, նրանք աշխատում

են զինեցանք: Նի վիւր ընկեր զերի յապաստաները վրական հանդիս հայերից որը թիւր լամ գիւղ տահայ պատճառ զեւերի զէմ. ն իրանք նի զէւ միայն Նրանց ին և ցին, ն դակեց պետին լայ զարձն տասիս թիւրք լացնու լիական շուառ ին և ռապէ Պարսկ վում թիւրք կական զէմ:

Մա սին սէս Սօֆի կան ֆողի Մարկ կունե վում են, մ մեծ Մեծ թիւր լի կա դեռ նից: հասկ նետե սայս միւս վանա նեան իրան թիւր լի կա ձակ Թ, անձն հետե սայս միւս վանա նեան կար ըրտ մար նիայ ներկ պակ ռը Գ, որ Դ նահ անձն ցանք ներկ լով ձեղ

են զինավորվել, ինչպես և ինչ սխալ էր հրահանգներով: Անցեալ տարվայ հոկտեմբերին Վանի վրայէտի շատ հայեր Պարսկաստանից հայրենիք վերադարձան: Նրանք ենթարկվեցին բնորոշ զերի յարձակումներին, սակայն նրանց մի մասը ապստամբ գտաւ երկրի ներսում, իսկ մնացածները փախան պարսկական Մալամ գիւղը, Սալմաստում: Հէնց որ այդ իմացաւ թիւրքաց տեղական հիւպատոսը, նա դրոշմ Սալմաստի նահանգապետ Զարգամ-Ուլ-Մուլի-խանին հաղածել հայերին, և նահանգապետը հրամայեց 300 բնորոշ զերի և զինուորներէ բաղկացած զօրամբին, որը թնդանովներ էլ ունէր, չընկալաւ Մալամ գիւղը: Թշուառ փախստականները չը վրաստանայան դիմադրութիւն ցոյց տալ և այն պատճառով, որ չէին կամենում պարսից իշխանութիւնները գրգռել հայ ազգաբնակչութեան դէմ, նրանք զինավորուեցան և յայտնեցին, որ իրանք թիւրքաց հպատակներ են, Պարսկաստանի դէմ ոչինչ չունեն և պարսկական հողի վրա միայն պաշտպանութիւն են որոնում քիւրդերից: Նրանց խօսքերի վրա ուշադրութիւն չը դարձրին և ինն փախստականներ հրացանի բռնակցին, նրանց մարմինները զլխատեցին և ալլանդակեցին, իսկ զինները ուղարկեցին նահանգապետին:

Հայոց եպիսկոպոս Խաչիկը խնդրեց վերադարձնել զինները հայերին, բայց նրան պատասխանեցին, որ այդ գլուխները կը յանձնվին թիւրքաց կառավարութեանը: Թղթակիցն աւելցնում է, որ միայն չնորհիւ Թաւրիզի անդլական հիւպատոս Վուդի միջնորդութեամբ, թըշուառ զոհերի զինները վերադարձվեցին հայերին և զօրքերի հրամանատարը ժամանակաւորապէս պաշտօնակէ եղաւ: Մինչև այժմ Պարսկաստանը բարեհաճ կերպով էր վերաբերվում հայերին: Այդ հանդամանքը անախտ էր թիւրքերին, որոնք և աշխատեցին գրգռել պարսկական իշխանութիւնները փախստականների դէմ:

Մ Ա Կ Ե Դ Օ Ն Ի Ա

Մակեդոնիայից ստացվող յուզիչ լուրերի մասին խօսելով, «Vaterland» լրագիրը նկատում է. «Ըստ երևոյթին, մակեդոնական բազմաթիւ Սօֆիայում մուրթութեամբ մէջ են իրերի իսկական դուրսման վերաբերմամբ: Եթէ նրանց աջակցէ փոքրիկ ապստամբութիւն առաջ բերել Մակեդոնիայում, նա ամենաողորմելի հետեւնքներ կունենար ազգաբնակչութեան համար: Սխալվում են իրանք և այն դէպքում, եթէ կարծում են, որ մակեդոնական հարցի լուծումը շատ մեծ նշանակութիւն ունի Եւրոպայի համար: Մեծ պետութիւնները հիմք ունեն ցանկալու, որ թիւրքաց կայսրութեան այդ նահանգում տանիքի կարգեր մտցնվեն, բայց այդ ցանկութիւնը դեռ շատ հեռու է զինավորված միջամտութիւնից: Մակեդոնական յայտնիքը, որոնք լաւ են հասկանում դրոշմի դրութիւնը իրանց ցեղակիցների դառն փորձերից, առ այժմ հանդիստ են պանոսի իրանց, և ոչինչ հիմք չը կայ ենթադրում, որ մակեդոնական շարժումը ընդարձակ չափեր կընդունի:

Այդպէս պէտք է դատէ իւրաքանչիւր մի անձն, ով միայն մտածում է այն ծանր հետեւնքների մասին, որոնք կը յաջորդեն ապստամբութեան: Սօֆիայի մակեդոնական կոմիտէի կարծելով, որ Ռուսաստանը իր հովանաւորութեան տակ կառնի ապստամբութիւնը, իր աչքի առջին ունի Կրետէի օրինակը, բայց աչքաթող չը պէտք է անել և Հայաստանի օրինակը:

Պատարեալապէս համաձայնվելով գերմանական լրագրի հետ, «աւելացնում է «С. Петерб. Вѣдомости» լրագիրը, որ ապստամբութիւնը Մակեդոնիայում չէ կարող ընդարձակ չափեր ընդունել, որ նա հեշտութեամբ կը ձնվի: և տխուր հետեւնքներ կունենայ մակեդոնական քրիստոնեաների համար, մենք, այնու ամենայնիւ, չենք կարող նորից մատնացոյց չանել, որ թիւրքաց քրիստոնեաների դրութիւնը անտանելի ծանր է և, վերջապէս, քրիստոնեայ Եւրոպայի համար ամօթ կը լինի թողնել էլի Մակեդոնիայի քրիստոնեաներին թիւրք-ֆանատիկոսների կամայականութեան տակ: Իսկ եւրոպական պետութիւնների բոլոր ջանքերը՝ ինչ որ բեֆօրմներ մտցնել Թիւրքիայի քրիստոնեայ նահանգներում, ցոյց են տալիս, որ նրանք կամ անձամբ են դրոշմ հետ, կամ զլուսամբ չեն ցանկանում սահման դնել թիւրքաց բռնութիւններին: Մակեդոնիային ինքնավարութիւն տալով միայն կարելի է տանել դրութիւն ստեղծել մակեդոնական քրիստոնեաների համար:

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Ռաշտ, յունվարի 4-ին

Անցեալ դեկտեմբերի 31-ին Էնզելի-Քէհրան խնուրու ընկերութեան կառուցած երկու կենտրոնական կայարանների (застава) բացումն էր, որոնք Ռաշտից երկու վերտո հեռաւորութեան վրա են կառուցված, մէկը դէպի Էնզելի տանող ճանապարհի վրա, միւսը դէպի Ղազուն տանող ճանապարհի վրա: Հրաւիրվածներ թըշուառն էին, պարսից կողմից, նահանգապետը, քարդուզարը և նրանց օգնականները, իսկ առաջ կողմից՝ հիւպատոսը, պարսից և հայոց վաճառականները, հիւպատոսի օգնականը և թարգմանները, խնուրու ընկերութեան տեղիս կառավարիչը և մի քանի ծառայողներ: Առաւօտեան ժամ ժամի 11-ին, առաջին կայարանում հայ քահանան, մի քանի ծառայողների ներկայութեամբ, նախապէս կրօնական հանդէս կատարելուց յետոյ, ուղեորվեց միւս կայարանը, ուր սպասում էր հրաւիրեալների մեծ մասը, և այդտեղ ևս կրօնական հանդէս կատարեց, որից յետոյ հրաւիրվածները նախաձայնի արին: Նըշադում էր պարսկական զինուորական կամուրջ: Ապա սկսվեց ճաշը, որը տեղեց մինչև երեկոյեան ժամի չորսը: Կայարանները դարձրված էին դրօշակներով: Հիւրերը ուրախ սպասարկութեան տակ հեռացան: Կայարաններից մէկը կրում է ներկայ հիւպատոսի ազգանունը (ПОХИТОНОВСКАЯ ЗАСТАВА):

Հետեւելով առաւօտ, յունվարի 1-ին, ինչպէս վաղօրոք յայտարարված էր, ընկերութիւնը պիտի սկսէր ճանապարհային հարկ հաւաքել, չը նայելով այն հեռադիւրներին, որոնք ստացվում էին Քէհրանից գանալան մարտային պաշտօնաներից, որոնք պիտի լինէին թըշուառ ընկերութիւնը կարող է իր հարկն առնել անկախ պարսից կառավարութեան առած հարկից, որը պիտի շարունակվի այսուհետև էլ: Այդ մասին հիւպատոսի կողմից խիստ դիմումներ էին եղել կառավարութեան, ծանուցանելով թէ՛ մի և նոյն անցորդից և մի և նոյն տեղում անկարելի է երկու հարկ առնել՝ մէկը պարսից կողմից, միւսը առաջ կողմից, հիւպատոսը նոյն իսկ սպառնացել էր, որ եթէ պարսից հարկահանները յոժարաւոր չը հեռանան, ինքը ոչով դուրս կը բէ նրանց:

Օրը ուրբաթ լինելով, պարսից կիրակին, առաւօտից մեծ բազմութիւն հաւաքվել էր հանդիսատես լինելու թէ՛ ինչպէս ռուսները պիտի սկսեն հարկ առնել երթևեկողներից: Բազմութիւնից փախուտ տալու համար առաւօտից շատ կանուխ գնացել էին այդտեղ հիւպատոսը և ճանապարհի կառավարիչը, որոնք անձամբ առան առաջին երկու դռանը, մէկը ինքը, հիւպատոսը, և միւսը՝ կառավարիչը: Այդ դրանք իրեն յիշատակ պիտի ուղարկվին Պետերբուրգ: Այնուհետև սկսվեց որդոված և հաստաւորված կանոններով հարկ առնելը, շատերից զօռով էին առնում:

Այս օրից բազմութիւնը հետզհետէ ստուարանալով մի քանի հազարի հասաւ, ներկայ էր ևս ինքնուրուպ կանոններով, որ ունէր իր ձեւը: Մի յայտարարութիւն: Չը մտնանք յիշել, որ կայարանների բացումից մի քանի օր առաջ ընկերութիւնը յայտարարութիւններ գրվեց այդ մասին, բայց մի քանի ժամից յետոյ այդ յայտարարութիւնների մօտ կպած տեսան և մի այլ յայտարարութիւն տեղիս հոգեւոր պետի կողմից, որով նա յայտարարում էր, թէ տեղացի ժողովուրդը, գիւղացիները ազատ են հարկից, որը պիտի վճարեն միայն վաճառականները և օտարազանները: Օրվան, որ ահադին բազմութեամբ եկել էր հարկահանութեան վայրը, կրօնապետի յայտարարութիւնը ձեռքին պահանջում էր, որ տեղացիներից հարկ չը վերցնեն: Հիւպատոսը այս բանի վրա սաստիկ վշտացաւ: Պէտք է այն էլ ասել, որ նախ քան այս դէպքը, Շարիաթ-Մալարը (յայտարարութիւնը հրատարակող կրօնապետը, բառացի մարդը)՝ օրէնքի մայրը՝ մի նամակ էր գրել հիւպատոսին յայտնելով, որ իր գիւղացիները իր համար զանազան բերքեր են բերում քաղաք, ուրեմն և ազատ պիտի մնան հարկից: Հիւպատոսը ուղարկել էր նրան 10 զինու, ասելով՝ «տուր քո ձիապաններին, թող վճարեն հարկը»:

Հետեւել օրը սկսվեց աղմուկ և ընդհանուր իրարանցում:

Ցանկարծ լսելի եղաւ կառքի ձայնը և երեւեցաւ հիւպատոսը իր օգնականի և երկու զօրակների հետ: Այդ տեսնելով, ամբողջ մի բռնակում ցրվեց: Բայց պէտք է նկատել, որ խռովութիւնը ընդհանուր չէր և անկայտ էր, որ Շարիաթ-Մալարի գիւղացիներն էին անկարգութիւն առնողները:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Լօնդոնի լրագիրները առաջնորդող յօդուածներ են նուիրում Նմենի ապստամբութեան և ցոյց են տալիս, որ այդ ապստամբութիւնը մեծ վտանգ է սպառնում սուլթանին, որովհետև Նմենը կարող է բաժանվել և կազմել առանձին անկախ խալիֆայութիւն: Թիւրքաց չընանները անդլական ինտրիգներին են վերադարձնում Նմենի ապստամբութիւնը: Անգլիան իբր թէ աշխատում է նորից յարուցանել հայկական խռովութիւնները և անկարգութիւններ առաջ բերել Արաքսի մոտ: Մակեդոնիայում, որպէս զի կարողանայ երկազաւակութիւն սերմանել մեծ պետութիւնների մէջ, օգտակար մարմար առնից՝ միայն իր հետ եղիպատոսը և Արաքսի:

—«Standard» լրագիրը հաղորդում է, որ թիւրքաց մեծ վեզիրը վերջերս մի անօրինակ յանդիպութեան օրինակ ցոյց տուց: Նա կազմեց մի «մազբաթ» առ, որ առաջարկեց ստորագրել միւս վեզիրներին, մազբաթայի կամ հանրադրի նպատակն է խաղաղացնել մուսուլմաններին և ցոյց տալ նրանց, որ Բ. Պուռը ոչ մի մասնակցութիւն չէ ունեցել Կրետէի խնդրի լուծման մէջ: Ահա ինչ է ասված. «Վեզիրն աստիճանի անհրաժեշտ է, որ մուսուլմաններն իմանան, թէ Բ. Պուռը սկզբից մինչև վերջը ոչ մի մասնակցութիւն չէ ունեցել այդ խնդրի լուծման մէջ, ոչ մի հրաման չէ տուել, ոչ մի միջոց ձեռք չէ առել Կրետէի վերաբերմամբ: Բ. Պուռը կամենում է արդարաւաղ ապագայ սերունդներին առաջ և հերքում է որ և է պատասխանատուութիւն: Այդ պատասխանատուութիւնը պէտք է ընկնի նրանց վրա, ով ներշնչել, առաջարկել և վարել է այն քաղաքականութիւնը, որի հետեւանքն եղաւ կղզու կրուստը, այն կղզու, որի համար մեր նախնիքը թափել են իրանց արիւնքը: Փաղախա՛ն, ի հարկէ, ոչ մի ուշադրութիւն չը դարձրեց իր վեզիրների այդ բողբոջի վրա:

—«La France» լրագրի մէջ տպված է «իշխան Պի գը Լուսինանի» Նուսադէմի, Կիւրոսի և Հայաստանի արքայական իշխանա ստորագրութեամբ մի յօդուած, որի մէջ իշխանը հրաւիրում է եւրօպական մեծ պետութիւններին ուշադրութիւնը Փեքր-Ասիայի հայ ժողովրդի թըշուառ վիճակի վրա և յոյս է յայտնում, որ կրետական հարցի լուծումից յետոյ, քրիստոնեայ պետութիւնները կաշխատեն իրարմբել Բերլինի կոնգրէսի 61-րդ յօդուածը:

ԻՍԱՔՆ ԼՈՒՐԵՐ

Լօնդոնի վերջին ցուցանանքներից մէկում առաջին մրցանակն արժանացան շքեղ կերպով կազմված մի քանի զբոսը, որ ուղարկել էր ոմն միսս Մաթէու: Այս օրերս բուրբուլին պատճառմը իմացվեց, որ այդ ծածկանուան տակ թաղվել է անդլական զանազանագի աղջիկը, որը վաղուց զբաղվում էր կազմարարական արհեստով, բայց այնպէս ծածուկ կերպով, որ նոյն իսկ ծնողները տեղեկութիւն չունեն: Վերջապէս, նա կանցաւ իմանալ, թէ ինչ գին ունի իր աշխատութիւնը և շատ ուրախացաւ, երբ ցուցահանդէսի յանձնաժողովը արժանի դատեց նրան առաջին մրցանակին:

Մի օտարտոնի հիւանդութիւն է երևացել Ամերիկայի Մասաչուսէտս նահանգում: Տասն և վեց տարեկան մի ջահիլ աղջիկ, զիբը կարգաւոր ժամանակ, յանկարծ մի անշարժելի բաց զգաց և ցանկութիւն այն գիրքն ունեւոր, որը բռնած ունէր ձեռքում: Նա թերթ թերթի կտուրից սկսեց պոկել և ուտել: Այդ տարօրինակ ցանկութիւնը հետեւել օրն էլ շարունակվեց, այնպէս որ հինգ շաբաթվայ ընթացքում նա կերաւ 12 վէպեր: Մոռոնները ստիպվեցին դիմել բժշկին:

ՄՇԱԿԻ՝ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

Կիեւ, 8 յունվարի: Այսօր իր քնակարանում սպանված է արքանական հարուստով դերասան Բօչին-Խուսարով: Մարդասպան—Մալով Պետեր-բուրգի թատրոնների ղեկավար է, որ եկել էր Կիեւ իր կնոջ՝ դերասանուհի Պաւլա Մալովայի մօտ, որը նոյնպէս խաղում է Կիեւի բեմի վրա: Սպանութեան պատճառը խանութիւնն է: Մարդասպանին բռնեցին փողոցում:

ՄՈՍԿՎԱ, 8 յունվարի: Բուրմանցիկ թանգարանը ընդարձակելուց յետոյ կը բացվի մասնիկ վերջին նորութիւնների ցուցահանդէս: Մէկ ամիս անցնելուց յետոյ, հանդէս գրված հրատարակութիւնները կը պահվեն թանգարանի դրաման մէջ:

ԿԱՅԻՐԷ, 8 յունվարի: Պաշտօնական լրագրի մէջ հրատարակված է անգլո-եղիպատական համաձայնութիւնը, որով որոշվում են Սուլթանի սահմանները: Բարձրագոյն իշխանութիւնը որոշվում է ընդհանուր-նահանգապետին, որին նշանակում է ինչիւրը, Անգլիայի համաձայնութեամբ, կանոնաւորվում են արտահանման մաքսերը, ոչնչանում է խառն գաղութաններ իրաւասութիւնը, արդիւնում է ստորկիւնը առնուելը: ԿԱՅԻՐԷ, 9 յունվարի: Անգլո-եղիպատական

դաշնագրի մասին լրացուցիչ տեղեկութիւններ համեմատ, անդլական դրօշակը կը ծածանվի եղիպատականի հետ միասին, բայց Սուալիմից:

ՊԱՐԻՋ, 9 յունվարի: Վճարեկ ատեանը դընտրակ քննեց դիպլոմատական dossier և լսեց Պալէօյօգի և Հանտօի այդ dossier-ին վերաբերեալ ցուցմունքները: Ապա դրանց երես առ երես կանգնեցրին Մէրսէի, Բուալէֆր, Գօնը և Բիլիօ գեներալներին հետ: Հաղորդում են, որ Լատէրսադի կը հարցաքննվի ոչ վաղ եկող շաբաթից:

ՄԱՍՍՈՎԱ, 9 յունվարի: Մակօնէն, հաղորդելով իտալական նահանգապետին խաղաղութեան դաշին կապելու մասին, աւելացրեց, որ Տիգրէ այժմ իր իշխանութեան տակ է գտնվում Յոյս ունեն, որ այժմ հաստատուն կը լինի խաղաղութիւնը Խալիպայի հետ:

ԲԵՐԼԻՆ, 9 յունվարի: Սամօա կղզիների թագաւոր ընտրութեան մասին հակասական լուրեր են ստացված, բայց, ըստ երևոյթին, ընդհանրում է տեղի ունեցել գերմանական հիւպատոսի և անգլիական ու ամերիկական հիւպատոսների մէջ: Ամերիկայից հաղորդում են այն տեղ տիրող սատարի յուզմունքի մասին, բայց այստեղ չեն հաստատում, որ կարող լինի ընդհանրում տեղի ունենալ շահ ունեցող պետութիւնների մէջ:

ՊԱՐԻՋ, 9 յունվարի: Պատգամաւորների ժողով: Սօցիալիստ Բէտօն հարցադրում է առնում դիպլոմատական dossier-ի մասին Դրէյֆուսի դրոշմի մէջ (Յուզմունք): Բէտօն, ապա Տրաչիս պնդում են, որ ժողովրդական լուսաւորութեան նախկին միւնիստր Բամբօ յայտնեց երկրագործական կոմիտէում, թէ Մէլինի միւնիստրութեան անդամները գիտէին Անրիի կեղծումների մասին (Յուզմունք): Մէլին և Բամբօ կտրական կերպով հերքում են այդ յայտարարութիւնը: Մէլին ասում է, թէ իմացաւ Մանրիի կեղծումի մասին, երբ ամբօնից այդ բանի մասին յայտնեց Կալէնեակ: Ինքն, Մէլին, դրօշմի վերաբնութիւնը կանխաձեռն էր համարում: Ինքն յետ չէ առնում իր ասած խօսքերը (Չահահան շարժումներ): Բէտօն վերջում պահանջում է, որպէս զի հաղորդվի ձեւաբուրմութիւնը դիպլոմատական dossier-ի մասին, որի դուրսը ինքն կրքենի հաստատվում, երբեմն հերքվում էր: Հետօքը կարծում է, որ dossier միմայն կեղծ դոկումէնտներ է պարունակում: Անհրաժեշտ է գտնել և պատմել յանցաւորներին (Բացազանութիւններ): Դէլիաս պատասխանում է, թէ կը թող տայ Պալէօյօգին ցուցմունքներ տալ վճարելի դատարանի առաջ և հաղորդել, թէ ինչ բանին են դադարի dossier անունը տալիս: Dossier-ի մէջ, —ասում է Դէլիաս, —չը կայ ոչ մի նամակ, որ դատաւարութեամբ գրած լինէր օտար թագաւորին, և ոչ մի նամակ էլ չէ եղել, որբան յայտնի է վերջին 10 տարիների ընթացքում միւնիստրութեան ծառայութեան մէջ գտնվող աղէնանքներին: Հարցնում էին նոյնպէս, թէ արդեօք նամակներ չը կան, որ գրած լինէր օտար թագաւորներից մէկը դատաւարութեամբ (Բացազանութիւններ): Դէլիաս կարծում է, որ այդպիսի դոկումէնտների իսկական լինելուն հաւան չէ կարելի ընծայել: (Մախահարութիւններ): Բայց արդեօք այդ դոկումէնտները կեղծված են եղել, —Դէլիաս այդ բանը ամենին չը գիտէ: Այդ հանգամանքի մասին ոչինչ չը գիտեն և արտաքին գործերի միւնիստրութեան մէջ: Բայց մինչև անգամ այն դէպքում, եթէ կեղծումն արած լինէր մէկը, նրա հեղինակը շատ կը զգուշանար բերել մի այդպիսի դոկումենտ արտաքին գործերի միւնիստրութիւնը: Դիպլոմատների կարելի է պարզամիտ համարել, բայց չէ կարելի թող տալ, որ նրանց պարզամտութիւնը հասնէր այն աստիճանի, որ նրանք կարողանային ընդունել մի այդպիսի ապրանք: (Մախահարութիւններ): Մէլին կտրական կերպով կրկնում է, թէ ոչ ինքն, ոչ էլ իր միւնիստրութիւնից մէկ ուրիշ չը գիտէին Անրիի կեղծումների մասին: Հետօքը դո՛ւ է, որ դրօշմ վերաբնութեան չը հասցրեց, որովհետև ոչ մի նոր փաստ, որը անհրաժեշտ դարձնէր վերաբնութիւնը, չը կար յիշել կայ անմեղ, թող նրա անմեղութիւնը յայտարարվի, բայց երկրորդ Դրէյֆուսի դրոշմի մէջ տեսնում է սխտեմատական և ստորագրողացիա զօրքի դէմ: Դրէյֆուսի դրոշմ միայն պատրուակ է (ժախահարութիւններ կենտրոնում) վերաբնութեան կողմնակիցների համար: Ժամանակ յետ մղել դրօշմ թնամներին: (Խիստ բողբոջներ ծայրայեղ ձախակողմից): Մէլին աւելացնում է, որ դրօշմի դէմ արշաւանքը անվիճելի է: (Նոր աղաղակ և ծախահարութիւններ): Սօցիալիստ Վիլիամի յայտնում է թէ իր կուսակցութիւնը յարգանքով է վերաբերվում դրբուն: Վիճաբանութիւններն աւարտվեցին: Առավարութեան

Թող տուած Տերմական գործերն հասարակ կերպով անցնելու բանաձևը ընդունվեց 480 ձայնով 51-ի դէմ: Նիստը փակվեց:

10-րդ օրը, 9 յունվարի: «Daily Mail» լրագրին Շանհայից հեռագրում են, որ Օդանուի նահանգից 8000 ապստամբներ յունվարի 10-ին յարձակում գործեցին Կոնստանդնուպոլիս: Քաղաքը պաշտպանող զորքերից սպանվեցին 200 մարդ: Ապստամբները պաշարել են քաղաքը: Նահանգի փոխարքան օգնական զորքեր ուղարկեց Կոնստանդնուպոլիս, 9 յունվարի: Ժամանակաշրջանը ծանալու է:

ՄԱՍՍՍՍՍՍ, 9 յունվարի: Հինգշաբթի Մակոնեն և Մանգալա բաժնիքը երկուսն էլ եկեղեցում խաղաղությամբ պահպանվեց:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 յունվարի: Վախճանվեց գեներալ Միլայի Նիկոլայի Աննիկովի Անդրկասպյան ճանապարհի շինողը:

ԲԵՏԻՄԵՆ, 10 յունվարի: Արքայադուխտ Գեորգի Զառա աստուղ «Ալեքսանդր» գրահանկի նաւով: Նաւաւանդուտում բանաձևն օրհնեց նրան ուստաց զորքաւորի կողմից: Ապա արքայադուխտը գնաց տաճար: Ընդունելու թիւնը փառաւոր է: Պատգամները և պատուհանները թափում են ծաղիկներ և կարմուսնուկներ: Տաճարից արքայադուխտը գնաց մզկիթ: Անգլիացի յետոյ մզկիթում, լսում էին անդադար չէր առնող արքայադուխտը: Ապա տեղի ունեցաւ զորահանդէս: Հրապարակի վրա կանգնած էր 10,000 հոգուց բաղկացած ամբոխը: Պալատում կայացաւ պատգամաւորութիւնների ընդունելութիւնը, որոնց արքայադուխտը դիմեց ճառով: Պատուհանից արքայադուխտը դիմեց նոյնպէս ճառով ժողովրդական զբօսանք և հրապարակի: Քաղաքը չքեղ կերպով զարդարված և լուսաւորված է:

ԲԵՏԻՄԵՆ, 10 յունվարի: Ռուսաց Վայրին ուղղած բաց նամակի մէջ, «Պատրիոտ» լրագրից ասում է, որ Բէլգիան, պետութիւնների երաշխաւորած չէլըքութեան հակառակ, ղեկավարական պետութիւնների կողմից ստիպվում է անդադար ղեկավարվել: Լրագրից ցանկութիւն է յայտնում, որպէս զի կոնֆլիկտի միջոցաւ անդադար չէլըք պետութիւնների իրաւունքները, մասնաւոր Բէլգիայի, որպէս պատերազմող կողմերի պարտաւորութիւնները դէպի չէլըք պետութիւնները, և սահմանէ միջնորդ դատարան չէլըք և մեծ պետութիւնների մէջ վէճեր սկսելու դէպքում, և պաշտպան չէլըք երկիրների անձնակազմի լինելը զանազակներով:

ԿՍԵՐԵՆ, 10 յունվարի: Ստորագրված է հրովարտակ, որով Կիտլենի նշանակվում է Սուդանի ընդհանուր նահանգապետ:

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 11 յունվարի: Գերմանական դեսպանը յանձնեց պետական քարտուղարին Բերլինից ստացված հեռագրերն և երկար խորհրդակցեց նրա հետ Սամայի հարցի մասին: Գործի խաղաղ կարգադրումը հաւանական է համարվում, որովհետև կարծում են, որ Բերլինի կառավարութեանը անախորժ է, որ խախտվի Բերլինի դաշնագրերը Սամայի մասին:

ՊԱՐԻՑ, 11 յունվարի: Եւրոպայի վաղը կը ներկայանայ վճռաբեկ դատարանի առաջ:

ԱՓԷՆԲ, 11 յունվարի: Երկրաշարժ է Պէլոպոնեսում: Երկու գիւղեր—Ֆիաթա և Ստատ—քանդվեցին: Բնակիչները հեռացան քաղաքից: Երկու ձեռքով յայտնի չէ թէ արդեօք մարդկային զոհեր կան թէ ոչ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Յունվարի 8-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արծէ	93	ը. 95	կ.
Բերլինի վրա 100 մարկ	45	»	82 1/2
Պարիզի վրա 100 ֆրանկ	37	»	25
Պոլսի վրա 100 ֆրանկ	—	»	—
Ստամբուլի կուպուսներ	—	»	—
Բորսայի գիւլետներ	6 1/2	»	7 1/2
4% պետական բնտա	101	»	—
4% ներքին փոխառութեան	101 3/8	»	—
3 1/2% զբաւ. լոյսի, ագն. կաւ. բանկի	99 3/4	»	—
4 1/2% վկայակ. գեւ. չոր. բանկի	—	»	—
Ներքին 5% առաջին փոխառութ.	291	»	—
Ներքին 5% երկրորդ	266	»	—
5% զբաւ. լոյսի, ագն. կաւ. բանկի	224 1/2	»	—
5% պետական երկաթուղ. բնտա	—	»	—
Պետերբ. բաղ. կւ. ընկ. օբլ. 5%	101 1/4	»	—
Մոսկուի բաղ. կւ. օբլ. 5%	101	»	—
Օդեսայի — — —	100 3/4	»	—
Թիֆլիսի — — —	99 3/4	»	—
Թիֆլիսի կաւ. բանկի 6%	—	»	—
Նոյնի — — —	100	»	—
Քու լոյսի կաւ. բանկի 6%	102 1/4	»	—
Նոյնի — — —	100	»	—

Խմբագիր՝ Ա.Լ.ՔԱՍՏԱՆԻ ԳԱԼԱՆԹԱՐ
Հրատար.՝ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԺԱՆԱՆԳՆԵՐ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԱԳԱՆՈՅ
Բ. ՆԱԽԱՍՏԱՐԻՆԵՆԻ

(Կուկիա, Վորոնոյի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:

Ա.ՌԱՌՈՏՆԵՐԻ

Բ. Ա. ՆԱԽԱՍՏԱՐԻՆԵՆԻ—11—12 ժ. վերաբու-
ժութեան, վնասակար (սիֆիլիս) և միլիարիա. հ.
Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին
և նեարային հ.

Ձ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵԱՆՅ—11—12 ժ. կանանց
հիւանդ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻԿ—12—1 ժ. ակնային,
կուրորի, ըթի և կրծքի հ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՅ—1—1 1/2 ժ. ներքին և
երկարաց հ.

Ա. Գ. ԳՈՒՐԿԻՆ—1 1/2—2 1/4 ժ. ներքին և մի-
ասեռական հ.

ԵՐԵՎԱՆԵՐԻ

Վ. Մ. ՄԱՍԻՍԻՍԻՆ—5—6 ժ. ներքին և երե-
խայց հ.

Ա. Ն. ՇԱՍԿԱՎԻԿ—6—7 ժ. նեարային (և-
լեկարաբուժութեան), վնասակար և մորթի հ.

Բ. Ա. ՆԱԽԱՍՏԱՐԻՆԵՆԻ—6 1/2—7 ժ.

Տ. Ի. ԲՈՒԿԵՆԿՈ Տիւնայանցի քիմիական
և խոշորացուցական հետազոտութիւններ է ա-
նում մէլի, խիւր, արեան, կաթի և այլն:

Վճար 50 կ. քաւորները ձրի: Հասկարձրդի
(կոնսերւմի) և օպերացիայի համար առանձին
Հիւանդանոցի վերաւանդ
75—150 Բժշկական ՆԱԽԱՍՏԱՐԻՆԵՆԻ

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

Ներքեք Արասխանեանցի Պատուի մե-
թոդով քննած որդի սերմերը բայեալ
Բարդատ տեսակի, արժանացած մեծ ար-
ձաթեայ մեղալի՝ Կայսերական այգեգործա-
կան ընկերութեան ցուցահանդէսում:
Դիմել՝ Վերին-Ստոլի, Ներքեք Լ. և Ի. Ա.
Արասխանեանցի, Թիֆլիսում՝ Ներք. Մ. Մա-
րտիկեանցիներին: (Կ. Տ. Ո. Կ. Տ.) 1—5

Բ.ՎԱՅՆԵՆ ԵՐԺՐՈՒՆԻ
ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՄՆԱԳԱՆՈՅ

ժամագրութեամբ բոլի, կուրորի, ըթի և
ակնային հիւանդութիւններով:
Առաւօտեան 9—12 ժ.
Երեկոյեան 4—7 ժ.
Գործիքակի պրոպ. № 28, տ. Աղաւթի:
14—15

Լոյս տեսաւ

ԱԼԷՔՍԱՆԴՐ ԺԱՅՈՐՔԵՆԻ

ԲՄՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Երկրորդ հատոր

ԳԻՆՆ Է ՄԵԿ ԲՈՒՐԼԻ

Հեղինակի հասցէն՝ Մոսկա, Садовая—Каретная,
меб. жом. Ивановой, № 10.
Տպարարութեան համար պատրաստվում է և
մինչև առաջիկայ մայիս ընդ կը տեսնի ՌՈՒՍ
ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐ խորագրով մեր աշխատու-
թեան առաջին գրքիցը, որի մէջ զետեղ-
ված կը լինեն բացառապէս ՊՈՒՇԿԻՆԻ բա-
նաստեղծութիւնները: 1—5

ԲԺԻՇԿ Զ. Յ. ՂՕԿԵԼՈՎԸ

Ընդունում է՝ վնասակար, արտակար, մոր-
թու և ներքին հիւանդութիւն ունեցողներին:

Առաւօտեան 9—12 ժամը

Երեկոյեան 5—7 ժամը:

Առանձին ընդունելութիւնը, ներքին և մորթու
հիւանդութիւն ունեցողներին համար՝ 12—1 ժա-
մը: Խիստի-միկրոսկոպային դործողութիւն՝ խոր-
խի, մէլի, արեան և արտակար հիւանդութիւն-
ներին Գանձակայա փողոց, տուն Մարգարովի,
№ 31: 16—20

ՖԱՐՐԱՐԻ

ՅԻՍՈՒՍ ԳՐԻՍՏՈՍԻ ԿԵՆԵԲԸ

Հուտով ընդ կը տեսնի և փետրվար ամսին
կուրորիկ յարգելի բաժանորդներին: Բաժա-
նորդագրին է երկու բարի:
Գարբիլ բանայ ՏԵՐ-Գարբիլեանց
1—1

ԲԺՅԱՊԵՏ Ե.Ի. ՔՐԱՆՑԻՈՒՍ

ժամագրէս կուրորի, ըթի և ակնային հիւանդու-
թիւններին:

Ընդունում է 5—7 ժամը երեկոյեան. Վերամի-
նովկայա փողոց, տուն № 4, Գուրայի հանդէպ:
(Ե. Տ. Ո.) 1—30

1899

Ս Ր Ս Ր Ս

Ս. ԷՋՄԻԱԶՆԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՌՈՒՒ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

Բ ա ժ ա ն ը ղ ա զ ի ն ի } Ռուսաստանում 4 ր.
Սրտասահմանում 5 ր.

Խնդրում ենք բաժանորդներին յայտնել իրանց ձիշտ հասցէները:

Հասցէն՝ Эчмиадзинъ, Типографическому Комитету, по части журнала „Ара-
ратъ“. Արտասահմանի համար. Rédaction du Journal „Ararat“ Etchmiadzine
(Caucase) 1—3

ОТКРЫТА ПОДПИСКА

НА ГАЗЕТУ

„НЕФТЯНОЕ ДѢЛО“

на 1899 годъ,

Органъ Совѣта съѣзда нефтепромышленниковъ въ г. Баку.

Выходитъ 2 раза въ мѣсяцъ по слѣдующей программѣ:

1. Указонія и распоряженія Правительства, касающіяся нефтяной промышленности. 2. Само-
стоятельные статьи, посвященныя нефтяной промышленности и другимъ связаннымъ съ нею вопросамъ,
каковы: судоходство, пути сообщенія, тарифы, кредитъ и т. п. 3. Хроника нефтяного дѣла: буреніе, до-
быча нефти, заводская ея переработка, вывозъ и торговли нефтяными продуктами. 4. Новости техники
нефтяного дѣла. 5. Статистика нефтяного дѣла. 6. Обзоръ печати: свѣдѣнія и мнѣнія другихъ изданій
по вопросамъ нефтяной промышленности и ихъ критическая оценка. 7. Корреспонденціи и телеграммы
изъ нефтяныхъ районовъ и центровъ нефтяной торговли. 8. Нефтяная биржа: цѣна на нефтяные про-
дукты, состояніе рынковъ, акціи нефтепромышленныхъ обществъ и общія биржевыя свѣдѣнія. 9. Поло-
женіе, нужды и статистика рабочаго населенія и служащихъ бакинскаго промыслового района. 10. Не-
счастные случаи и пожары на нефтяныхъ промыслахъ, заводахъ, складахъ, станціяхъ, пристаняхъ, су-
дахъ и поездахъ. 11. Отчеты нефтепромышленныхъ фирмъ. 12. Библиографія: рецензіи о книгахъ и
статьяхъ по нефтяной промышленности и вопросамъ, имѣющимъ связь съ нею. 13. Сметы: мелкія ново-
сти изъ нефтяного міра. 14. Отчеты о съѣздахъ нефтепромышленниковъ: ходатайства, отзывы, мнѣнія и переписка Совѣта по воп-
росамъ и нуждамъ нефтяной промышленности съ правительственными и общественными учрежденіями.
15. Представительская дѣятель-
ность Совѣта съѣзда нефтепромышленниковъ: ходатайства, отзывы, мнѣнія и переписка Совѣта по воп-
росамъ и нуждамъ нефтяной промышленности съ правительствомъ бакинскаго промыслового и заводскаго райо-
новъ: врачебное дѣло, народное образованіе, пути сообщенія, осушеніе промысловъ, пожарное дѣло, об-
щественныя сооруженія, приходы и расходъ суммъ съѣзда и пр. 17. Объявленія о предметахъ, имѣющихъ
связь съ нефтяной промышленностью.

Подписная цѣна съ доставкой: на годъ 10 р., на 6 мѣсяцевъ 6 р.,

3 мѣсяца 4 руб.

Подписка принимается въ г. Баку, въ редакціи, въ помѣщеніи Совѣта съѣзда
нефтепромышленниковъ

Объявленія принимаются тамъ-же.

Редакторъ О. О. Гукасовъ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՐԱՋԱՄԵԱՆ
Հեղինակ Ձեռնարկի առևտրական և գործարանական հաշվապահության
ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է
Երկու սեռի անձանց 4 ամսվա ընթացքում հաշվապահություն գործադրանապէս, և-
րաշխարհակով և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել:
ՊԱՐԱՊՈՒՐԻ ԱՌԱՎԱՆԵՆԻ ԵՆ
Ա) Կրկնակի խաղական հաշվապահություն ըստ ամենայն առևտրական ձևերի, հան-
դերձ նախալին արդիւնաբերական և կերտինի գործարանական հաշվառութեան:
Բ) Առևտրական լուսանկարներ:
Գ) Առևտրական նամակագրութիւն:
Դ) Կեղագրութիւն և ամենալատ ձևերի ուղղելը:
Պարագմունքներն սկսվելու են 1899 թ. յունվարի 15-ից, ճաշից յետոյ և պարբերաբար
չարունակվելու են խորաքանչիւր 20րդ ամսից յետոյ, իսկ կիրակի օրերը լինելու են առանձին
գործարան պարագմունքներ:
Ցանկացողները թող դիմեն զրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչև 5 ժամ երկուրեան,
Ս Օ Լ Օ Լ Ա Կ, Սերգիեվսկայա փողոց, տուն Լիսիցկանի, № 20:
Վերջինեալ հաշվապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, Խիզկիկէի դրա-
վաճառանոցում և Տեղական ժողովուրդի ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, Խիզկիկէի դրա-
վան է 3 ր. 50 կոպէկ: Օտարաբաղադրյալները դիմելը դնելու համար կարող են դիմել հե-
ղինակին, առանց պատմի ծախս վճարելու:
(Ե. Տ. Ղ.) 13—20

ԲԱՅՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ Ե Ա Ն Ք

ԳՐԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՑԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԻՍԻ

Ա. և Բ. գրքերի համար

Հանդէսը նուիրված է լինելու ազգային և օտար գրական-հասարակական խնդիրներին: Ա-
ռանձին ուղարկութիւն է դարձվելու գեղարուեստական գրականութեան, քննադատութեան և
սօցիալական հարցերի վրա:
Հանդէսը ընդ է տեսնելու 1899 թ. առաջին օրը պարբերաբար տարեկան երկու անգամ:
Ամեն մի գիրքը բաղկացած է լինելու ոչ պակաս 25 թերթից: Բաժանորդագրին է
երեք (3) րոպէի:
Հասցէն՝ Нахичеванъ на/Дону, Минасу Верберьяну.
2—4

Հրատարակիչ՝ Մինաս Բերբերյան

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie

ՖԻԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷՆԻՑ ԲԱՐՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբա-
թը մի անգամ, սկսած յունվարի 25/6-ի չորեքշաբթից,
և հաւառակը՝ Բաթումից Մարսէլ, մանկով Տրապիզոն, Սամսուն և Պոլսի: Մեկնում է Բաթու-
մից՝ չորեքշաբթի, 20 յունվարի (1 փետրվարի) ՍԻՐԿԱՍՍ չորեքշաբթի, նաւապետ ԳԱՐԻԲԻ, եւ այսպէս
չարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ:
Բաթումից Պարսկ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից
պակաս գինով:
Ապրանքներ և ճանապարհորդներին մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար
թող բարեհաճան դիմել ընկերութեան գործակառարներին:
ԲԱՐՈՒՄՈՒՄ—Կ. Վիկտոր դ'Արնոսի, Նաբէլէմայա: ԹԻՖԼԻՍՈՒՄ—Կ. Օ. Գ. Բարեկինդա-
նեանին, Սիմոն փող. նախկին Արծրունու բարձրասար: ԲԱՐՈՒՄ—Կ. Ս. Կիլլարեանին, Գոլիբեա-
կինայա հրապարակ: ՆՕՎՈՐՈՍՍԻՑԱԿ—Կ. Մեխիոր Հերշնորդերին: (Ե. Տ. Ղ.) 5—20